



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

21 հոկտեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Պետրոսյանի
Անդամակցությամբ՝ Ֆ.Թոխյանի
Ա. Թունյանի

Ուսումնասիրելով Արամ Շահբազյանի անհատական դիմումի ընդունելիության
հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Արամ Շահբազյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան (դիմումը ՀՀ սահմանադրական դատարան է մուտքագրվել 2016 թվականի հոկտեմբերի 3-ին)՝ խնդրելով.

«Որոշել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով ամրագրված դրույթների՝ ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 61 (1)-րդ, 63 (1)-րդ, 78-րդ, 79-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներին համապատասխանության հարցը»:

Ըստ դիմողի՝ վիճարկվող իրավակարգավորումներից, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությունից բխում է, որ այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը դատարանի կողմից վերադարձվել է ՀՀ քաղաքացիական դատավա-

րության օրենսգրքի 210-րդ հոդվածի պահանջները պահպանված չլինելու հիմքով և վերաքննիչ բողոք բերած անձը որոշել է իրացնել «բողոքը վերադարձնելու մասին» որոշումը վճռաբեկության կարգով բողոքարկելու իր իրավունքը, ապա վերջինս ինքնաբերաբար զրկվում է իր բողոքը չբավարարվելու դեպքում վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելու հնարավորությունից:

Դիմողը գտնում է, որ բողոքն անհիմն վերադարձվելու դեպքում անձը զրկվում է այդ որոշման դեմ արդյունավետ պաշտպանության միջոցի հնարավորությունից:

Քննության առարկա անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ դիմողը պահպանել է ՀՀ սահմանադրական դատարանի դիմելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահանջները, այն է՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին.
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան.
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում.
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում.
- դիմողն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Քննության առարկա անհատական դիմումով ներկայացվել է պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ միջնորդություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով §Սահմանադրական դատարանի մասին՝ ՀՀ օրենքի 31 և 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «Արամ Շահբազյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

3. Բավարարել Արամ Շահբազյանի անհատական դիմումով ներկայացված՝ պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ միջնորդությունը:

Նախագահող՝

Անդամներ՝

21 հոկտեմբերի 2016 թվականի
ՍԴԴԿՈ/ 1-30